

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դալարիկ գյուղական համայնքի ղեկավարի

(2014 թվականի 1-ին կիսամյակ)

2014թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում Դալարիկ գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Գյուղապետարանը բնակիչներից ստացել է 55 դիմում, ինչպես նաև բանավոր հարցումներ, որոնք քննարկվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ: Գյուղապետարանը բնակիչներին տվել է 240 տեղեկանք, ստացել 40 պաշտոնական նամակ, որոնք քննարկվել են և սահմանված ժամկետներում տրվել պատասխաններ:

- 2014թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում կազմակերպվել է համայնքի վարչական տարածքում սաննաքրման աշխատանքներ, որոնք կրել են պարբերական բնույթ՝ մաքրվել են ոռոգման առուները, փողոցները, բազմահարկ շենքերի բակերը, սպորտ-հրապարակի տարածքը, մանկապարտեզի, երաժշտական դպրոցի, համայնքի վարչական տարածքով անցնող Երևան-Գյումրի մայրուղու և երկաթգծի տարածքները:

-Նախագինակոչային տարիքի պատանիներից 20-ը ներկայացել են Արմավիրի Ձինկոմ և գարնանային զինակոչը գտնվում է ընթացքի մեջ:

- Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման և սահմանների ճշտգրտման աշխատանքներ:

- Ցրտահարությունից տուժած քաղաքացիներին տրվել է պարարտանյութ և դիզ. վառելիք, զիջվել է հողի հարկը:

- Կարկտահարության վնասները մասամբ վերականգնելու համար համայնքի ղեկավարի աջակցությամբ վերադասից ստացվել և ժողովրդին է բաժանվել տարբեր տեսակի սերմեր՝ նոր ցանքս և սածիլավորում կատարելու համար:

- Համայնքի տարածքում կատարվել է խմելու ջրի ջրագծի վերանորոգման աշխատանքներ և շատ մասերում տեղադրվել է ջրաչափ սարքավորումներ խմելաջրի քլորացման հարցը լուծվում է ժամանակին:

- 2014թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի սեփական եկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

ա) հողի հարկ - 673.7 հազար դրամ,

- բ) գույքահարկ – 1034.0 հազար դրամ,
- գ) տեղական տուրք – 3.6 հազար դրամ,
- դ) պաշտոնական դրամաշնորհ – 31042.6 հազար դրամ,
- ե) ընթացիկ սուբվենցիա - 101.3 հազար դրամ,

- Համայնքում իրականացվել են մի շարք սոցիալ-տնտեսական միջոցառումներ և ծրագրեր, գյուղապետարանի աշխատակազմը համայնքի ղեկավարի ղեկավարությամբ աջակցել է աշնանացան ցորենի և գարնանացան գարու բերքահավաքի աշխատանքներին.

ա) համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին, տարեց կանանց, հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին, արցախյան պատերազմի մասնակիցներին, հաշմանդամներին տրվել է դրամական օգնություն 2000.0 հազար դրամ,

բ) աղբահանման աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է 400.0 հազար դրամ,

գ) 4858.4 հազար դրամ ծախսվել է համայնքում նախադպրոցական կրթության հաստատությունում աշխատանքների պատշաճ կազմակերպման համար:

դ) 3239.3 հազար դրամ ծախսվել է համայնքում արտադպրոցական դաստիարակության հաստատությունում (երաժշտական դպրոց) աշխատանքների պատշաճ կազմակերպման համար:

- Համայնքի մշակութային միջոցառումների կազմակերպման համար ծախսվել է 500.0 հազար դրամ:

- Մշակույթի տունը գործում է, սակայն շենքը վերանորոգման խիստ կարիք ունի:

- Համայնքը խիստ կարիք ունի գյուղամիջյան ճանապարհների վերանորոգման:

- Համայնքի 19 բազմաբնակարանային շենքերի կտուրները ունեն կապիտալ վերանորոգման խիստ կարիք:

Դալարիկ համայնքի ղեկավար



Պ. Սաղաթեյան